մերթ վերեւից զանգակների համբիչը շարժում է, նաւի խորքից շղթաներ են սողում խուպոտ տնքոցով, եւ ամէն ինչ, նորից, դըրկում է անդորրը:

Կամուրջի առջեւ ճամբորդների երկար ստուերները կանգ են առնում եւ դիտում: Նաւաստիները, խումբ խումբ բաժնուած, կատակներ են անում: Աւելի հեռում, սանդուխների վրայ նստած, մի քանի հոգի, մանդոլինի ընկերակցութեամբ երգում են: Նապոլին հառաչում է, լոյսերի բլրակներ թափում օդի մէջ կայծկլտում ու ձայների դողդող ելեւէջների վրայով սահում, բարձրանում եւ յուսահատ նետուում ջուրը:

Ճերմակ ամպի տակից, մի աստղ կանչում է. «Ե՛ս ոսկի եմ»:

Ծովը երազում է: Զուկերը, խարուած, մի աչքը բաց են արել, դիտում են ներս խուժող ճառագայթին: Արծաթէ զանգակներ են զօղանջում, նայադները մերկացել են:

Հեքեաթը բաց է թողել իր բոլոր ձիերը: Սպիտակ ձիեր, բիւրեղի մէջ քանդակուած եւ գունաւորուած ոտքերով: Թռչում են, թափանցիկ ամպերի տակ, անձայն եւ արագ: Օդը կանգ է առել, նայում է:

Նայում եմ:

Հեռում, երկրի անհանգիստ եզերքը հեռապնդում է մեզ սեւ ուրուականի նման:

Լեռների ետեւում լուռ աղաղակներ են բարձրանում եւ վիզերը երկարած, սարսափով նայում ծովին:

Նաւի վրայ այլեւս ոչ ոք չի երգում: Ամէն ինչ լռել է. միայն նաւի քիթն է կտրում ջուրը եւ կտոր կտոր դէն նետում:

Է՛լ չմտածեմ, է՛լ չերազեմ...

* * *

Կիրասոն–Սամսոն...

Կանանչ բլուրներ, փայտէ տնակների խումբ եւ ծովափի մօտ ճերմակ մզկիթ: Նաւը կանգնում է ափից հեռու, խարխսխ նետում, սուլում:

Դանդաղօրէն մօտենում են մի քանի նաւակներ: Ընկերութեան ներկայացուցիչը՝ հեռուից գլխարկը շարժելով: Քարացած դիրքով ոստիկաններ: Մի քանի լրտեսներ պտուղ են ծախում, նայում են ճամբորդներին եւ մէկ մէկի աչքով անում:

Նաւը երկար ժամեր սպասում է: Մարդ չկայ, ապրանք չկայ: Նաւապետի օգնականը, մի քանի մարդկանցով, գնում է ձուկ որսալու:

Հեռադիտակի տակ տները մօտենում են, մեծանում եւ ապշած՝ միշտ նոյն կողմը նայում: Ոչ մի շարժում: Երբեմն բլուրից վար է իջնում սեւ մի կէտ: Մի սայլ է անցնում: Քարափի վրայ մի մարդ, աթոռի վրայ տնկուած, սուրճ է խմում. շուրջը հաւեր են պըտտում, մի աքլոր երգում է:

Այդպէս ժամերով:

Նայում եմ դէմքերին, աշխատում եմ սակաւ բառերի իմաստը հասկանալ: Դատարկ սենեակում մոռացուած ժամացոյցի նման մի բան է շարժուում: Բլուրների ետեւից սպանդանոցի հոտ է գալիս: Ափի խաղաղութիւնը մեռելի լռութեան է նմանում:

Այդ մանաւանդ զգում են հայ ճանապարհորդները:

Տաճիկ ոստիկանների վրայ արագ նայուածքներ են նետում: Մէկ մէկի աննշան խօսքեր են ասում: Ծածկում են իրենց սրտի որդը:

Մտածե՛լ, այս անդորրութեան շուրջը ինչպիսի՞ փոթորիկներ են ման գալիս:

Մի քանի կիլոմետր հեռու թնդանօթները ոռնում են, գիւղեր եւ քաղաքներ այրուում, մարդիկ կոտորուում:

Ետեւը՝ խուճապ, առջեւը՝ սոսկում եւ անյայտութիւն:

Հարցնում են, ե՞րբ պիտի մեկնենք: Ուզում են մեկնել, շուտ մեկնել: Ո՞վը, անպէտ ծովը, — գոնէ մոռանալ, չմտածել, յուսա՛լ:

Ոչ ոք չի իմանում, ե՞րբ պիտի մեկնենք:

Նաւապետի օգնականը դեռ ձուկ է որսում:

Արեւը բլուրների ետեւ է անցել: Նաւաստիները թուղթ են խաղում:

Այս սպասումը երկար հիւանդութեան է նմանում: Հիւանդութիւն, որ գալիս է չգիտես որտեղից, քնաշրջիկի վատութեամբ, դուրս է հանում անհատի խորքում թաքնուած վտանգը, գնում է նրա առաջ եւ ճակատագրական ժամի խուլ զանգը զարնում:

Խիտ անտառների ծոցում վտանգաւոր ոտնաձայն ընող գազանների նման, սիրտը

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան